# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

2018-2019 ուստարի

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

*Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:*

*I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:*

*II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:*

*III մասում առաջարկվում է գրել շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր: Շարադրել գրագետ, թույլ չտալ ուղղագրական, կետադրական, ոճական և շարադասական սխալներ:*

*Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.*

*ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),*

*բ)շարադրանքի որակ՝5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):*

*Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:*

*Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:*

# ՄԱՍ I

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.** ***Լրացնել բաց թողած տառերը.***

Ալեզար__, քա__ասուն, կար__որ, թիկն __թոց, փղ__կալ, պախուր__, հարա__ային, Իսրա__ել, զ__ջալ, ապաշնոր__:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.** ***Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները.***

*Լեզվակ*_____ *Կողոպտել* _____

*Ձնծաղիկ*_____ *Լուսավոր*_____

*Արնաներկ*_____ *Աղավնյակ*_____

*Վիպասան*_____ *Հնամյա*_____

*Մատենագիր*_____ *Ամռան*_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.** ***Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.***

ի (պատիվ), լեփ (լեցուն), ճակատ (ճակատի), ռազմա (ծովային), հարավ (արևմուտք), իննսուն (ինը), հիսուն (վաթսուն), ամառ (ձմեռ), ալ (կարմիր), տնե (տուն).

_____

_____

_____

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.** ***Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.***

Քրիստափոր Կարա-Մուրզա, Իսպանիայի Թագավորություն, Թորոս Ռոսլին, Դանիել Բեկ-Փիրումյան, Քեոփսի Բուրգ, Ատլանտյան Օվկիանոս, Գեղամա Ծով, Մենուա Առաջին, Հյուսիսային Ամերիկա, Վանի Թագավորություն, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Պարթև Անակ, Խորհրդային Միություն, Մխիթար Գոշ, Տաթևի Վանք.

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.** ***Կետադրել.***

Անդորր ծովի վրա այժմ հողմն է շառաչում և անկասելի հարվածներ տեղում: Մոտենում է լերկ ժայռերին դարձյալ հետ քաշվում նորից մոտենում գանգուրներով զարդարված ճակատով մարտնչելով նրանց հետ: Ճակատամարտն անընդհատ շարունակվում է և ալիքները սրընթաց վազում են կրկին հարձակվում ջանալով ճեղքել իրենց ճնշող ժայռի կուրծքը: Նրանք ճիգ են թափում մոլեգնում բայց զգալով ժայռերի անհաղթելիությունը ընկրկում են հեռանում:

## ՄԱՍ II

**Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.**

(1) Գևորգ Բաշինջաղյանը հայկական բնանկարային գեղանկարչության կարկառուն դեմքերից մեկն է: (2) Հազար ութ հարյուր ութսունական թվականներին Բաշինջաղյանը կտրեց-անցավ անդրկովկասյան չնաշխարհիկ բնության արահետները: (3) Ճամփորդական նոթերը գրի առնելով՝ բնության հանդեպ հիացումն արտահայտեց նուրբ բնանկարներում, որոնք նա ներկայացրեց իր առաջին ցուցահանդեսներում՝ ի ցույց մարդկության: (4) «Կեչիների պուրակը» ստեղծագործության մեջ արդեն ակնհայտ է ինքնամփոփ արվեստագետի անօրինակ տաղանդը. մի քանի կեչիների պատկերումով ստեղծել է ոսկեզօծ աշնան պատրանքը: (5) Մի առիթով «Մշակը» գրել է. «Բաշինջաղյանն իր վրձինը նվիրել է ոչ միայն հայրենյաց գեղեցիկ բնությանը, նրա երնակարկառ լեռներին, հովիտներին, նրա տխուր ավերակներին, այլև կռահել, որ նրա նկարները հիշատակներ են զարթնեցնում»:

(6) Բաշինջաղյանը բնապատկերի անհատականացման հասավ հատկապես գիշերային պահերի գրավչությունը խտացնող կտավներում: (7) Սևանի, Դարյալի և կովկասյան բնության այլ տեղանքների գիշերանկարներում, կարելի է ասել, նա մոտեցավ բնության նախնական անբասիր մաքրությանն ու անաղարտությանը: (8) Նրա թավուտ անտառների և խորախորհուրդ գիշերային պատկերների միջով ասես անցել են անօրեն ելուզակներ ու ժանտ թագավորներ, տարօրինակ ճամփորդներ, որոնց մասին պատմվում էին ռուս, հայ, վրացի, նաև եվրոպացի հեղինակների հորինվածքներում: (9) «Բաշինջաղյանը անդորր ու ամայի բնության նկարիչ է,- գրում է Շիրվանզադեն,- և մենք իրավունք չունենք պահանջելու նրանից, որ իր վրձինը դարձնի փոթորիկների, կենդանիների և մարդկանց զոհ»: (10) Մեծ նկարչի մի քանի կտավներ ուղղակի ապշեցնում են և՛ խորունկ տրամադրությամբ, և՛ կառուցվածքային յուրօրինակ լուծումներով: (11) Այդպիսի աննախադեպ մի գեղեցկություն է «Անդրադարձումը» ստեղծագործությունը, որը ներկայացնում է արծաթազօծ լուսնի փայլը ծովի խորքում: (12) Առանձնակի ներշնչանքով է վրձնված «Կազբեկը». երկնագույնի, արծաթավունի, ուլտրամարինի, բաց վարդագույնի և շագանակագույնի արտառոց ներդաշնակություն է այդ կտավը:

*Ըստ Մ.Միքայելյանի*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *10-րդ և 11-րդ նախադասություններից դուրս գրել 4 դերանուն:*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *8-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածական.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *7-րդ նախադասությունից դուրս գրել 2 ածանցավոր գոյական և 2 ածանցավոր ածական.*

Գոյական_____

Ածական_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. 12-*րդ նախադասության* *<u>վրձնել</u>* *և* *<u>երկնագույն</u>* *բառերի համար գրել երկուական հոմանիշ.*

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. *Որոշել 6-րդ նախադասության* *<u>հասավ</u>* *բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *10-րդ նախադասությունից դուրս գրել* *<u>գործիական հոլովով գործածված</u>* *2 գոյական.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *3-րդ նախադասությունից դուրս գրել 1 թվական և որոշել տեսակը.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. *1-ին նախադասությունից դուրս գրել որոշչի 2 օրինակ.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *5-րդ նախադասությունից դուրս գրել հանգման խնդրի 2 օրինակ.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *3-րդ նախադասությունից դուրս գրել տեղի պարագայի 2 օրինակ.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. *6-րդ նախադասությունից դուրս գրել ենթակայական դերբայի 1 օրինակ.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *3-րդ նախադասությունից դուրս գրել նախադաս դերբայական դարձվածը.*

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18.*1-ին, 3-րդ և 4-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.*

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19.*Կազմել 3-րդ նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. *9-րդ նախադասության ուրիշի ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի խոսքի.*

_____

_____

_____

_____

_____

## ՄԱՍ III

| Կատարել տրված 3 առաջադրանքից <u>միայն մեկը</u>. |
|---|

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21. Գրել ազատ շարադրություն տրված վերնագրերից միայն մեկով.*

*ա/ Իմ առջև է Գ.Բաշինջաղյանի «Անդրադարձում» կտավը (ստեղծագործական երևակայություն)*

*բ/ «Աշնան պատկեր»*

*գ/ «Բնությունը՝ մեծ նկարիչ»*

*Նվազագույն ծավալը՝ 100 բառ*